

ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ.

ԱՐԴՐԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Արմինե Առստամյան

Բանալի բառեր` ինքնավարություն, պատմական որոշում, ԼՂԻՄ, արցախահայություն, քաղաքականություն, հայական մաս, էթնիկ գտում, կեղծարարություն:

Ադրբեջանական պատմագիտությունը կոչված է ծառայելու թուրք-ադրբեջանական հակահայկական քարոզչամեթոդային, պետական քաղաքականության մակարդակի հասցված պանթուրքիզմի գաղափարախոսությանը, որի հիմքում դրված էին այլոց պատմական հողերը յուրացնելու և պատմությունը սեփականաշնորհելու սկզբունքները: Անկախ քաղաքական համակարգերից` պանթուրքիզմի գաղափարախոսությունը շարունակվեց և շարունակում է մնալ Թուրքիայի ազգային իդեալի հիմքում: Պանթուրքիզմի գաղափարախոսության իրականացման կարևորագույն քայլ և հետագա գործողությունների ծավալման խարխիս դարձավ Թուրքիայի կողմից արհեստածին Ադրբեջանի հանրապետության ստեղծումը: Հանրապետություն, որի հռչակումը արդյունք էր ոչ թե ազգային համախմբման, պետականության արմատների, ազգային ինքնագիտակցության, այլ մեկ այլ հովանավոր պետության` Թուրքիայի գավթողական, շոփինիստական գաղափարախոսության, մի գաղափարախոսություն, որի հետևանքը եղավ 20-րդ դարի մեծագույն ողբերգություններից մեկը` հայոց ցեղասպանությունը: Եվ պատահական չէ, որ ադրբեջանական պետությունը, պանթուրքիզմի դրույթներից ելնելով, վերածվեց այս գաղափարախոսության իրականացման գործիքի: Ադրբեջանի կողմից Արցախի, Ջանգեզուրի, Նախիջևանի նկատմամբ գավթողական քաղաքականությունը հովանավորվեց դաշնակից Թուրքիայի և, ցավոք, թողտվություն ստացավ նաև քաղաքական ոչ բարվոք պայմաններում հայտնված խորհրդային Ռուսաստանի կողմից: Հիշյալ ժամանակաշրջանի պատմական դեպքերն արտացոլող ադրբեջանական պատմագիտությունը որդեգրեց այն կեղծաբանելու, Ադրբեջանի նվաճողական քաղաքականությունը քողարկելու մեթոդաբանություն: Սակայն որքան էլ փորձ էր կատարվում անհիմն և կեղծված փաստերով յուրացնելու հայոց պատմական արժեքները և հայ ժողովրդին ներկայացնելու որպես գավթող, այդուհանդերձ այս պատմաբանների աշխատություններում դժվար չէ իսկույն նկատել պատմության շարադրման հիմքում ընդունված պանթուրքիզմի գաղափարախոսությունը, ինչն էլ դառնում է հատկապես պատմական այդ դեպքերն աղավաղված ներկայացնելու դրդապատճառ: Այսպես` ոմն Նիֆտալիևի մոտ ընթերցում ենք. «Թուրքիան և թուրքերը չեն կարող անտարբեր լինել Ադրբեջանի և ադրբեջանական թուրքերի հանդեպ, քանի որ Ադրբեջանն այն կամուրջն է, որով Թուրքիան պետք է միացվի թուրքերի հետ» [1]: Մեկ այլ հեղինակ` Գ. Հասանլին, գրում է, թե Ադրբեջանի հանրապետության ստեղծման գործում մեծ և անուրանալի դեր ունի Թուրքիան [2]:

1920թ. ստեղծվեց մի իրավիճակ, երբ Անտանտի դեմ պայքարում տեղի ունեցավ բոլշևիկյան Ռուսաստանի և առաջին աշխարհամարտում պարտություն կրած ու անկման ուղին բռնած Թուրքիայի քաղաքական միավորումը: Երկու պետություններին միավորող ընդհանուր շահը դարձավ պատճառ հայոց պատմական հողերի կորստի: Կովկասյան հանրապետությունները խորհրդային դարձնելու և սոցիալիստական հեղափո-

* Հոդվածն ընդունվել է 15.11.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ պատմության ամբիոնը:

խություն բարձրացնելու ծառայությունների դիմաց, Խորհրդային Ռուսաստանը պատրաստ էր ի շահ Ադրբեջանի տարածքային զիջումներ անելու վերջինիս՝ բավարարելով Թուրքիայի հեռահար նպատակները: Իհարկե, Թուրքիայի նպատակը Ադրբեջանը և ընդհանրապես Անդրկովկասը խորհրդայնացնելը չէր, բայց այս միտումը տվյալ պահին շահավետ էր, չնայած որ վերջնական չէր արտացոլում Թուրքիայի նպատակը՝ պանթուրքիզմը: Ադրբեջանի խորհրդայնացումը, ի շահ Ռուսաստանի, Թուրքիան տեսնում էր որպես տվյալ պահին իրավիճակային լուծում ընդդեմ Անտանտի և այսպես կոչված հմպերիալիզմի, որի դիմաց ձեռք էր բերում Խորհրդային Ռուսաստանի քաղաքական հովանավորությունն ու դաշնակցությունը: Այսպես՝ վերոնշյալ ադրբեջանցի պատմաբանը, ներկայացնելով ստեղծված կացությունը, մեջբերում է թուրք գործիչներից մեկի՝ Խալիլ փաշայի խոսքերը, այն մասին թե «Թուրքիայի նպատակը Ադրբեջանին տրամադրելը չէր Ռուսաստանին (նկատի ունի Ադրբեջանի խորհրդայնացումը), իսկ Ադրբեջանը ես համարում եմ իմ հայրենիքի մի մասը, որի անկախության և սուվերենիտետի համար մենք այդքան ջանքեր ենք թափել [3]: Թուրքիայի արևելյան քաղաքականությունը ձևավորող գործիչներից մեկը՝ Քյազիմ Կարաբեքիրը, թուրքական հրամանատարներին ուղարկելով Ադրբեջան, հետևյալ հրահանգն էր տալիս, որ թող «ադրբեջանցիները չխանգարեն մեզ և արգելք չդառնան բոլշևիկների մուտքին, այլ ընդհակառակ, կապեր ստեղծեն բոլշևիկների հետ ու չխանգարեն թուրքերի ու բոլշևիկների մերձեցմանը Արփաչայի ակունքներում: Միևնույն է, մենք վաղ թե ուշ ջախջախելու ենք հայերին...» [4]: Նոր Թուրքիայի ստեղծման հովերով տարված քեմալականները պատրաստ էին համագործակցել բոլշևիկների հետ՝ ի հաշիվ կովկասյան հանրապետությունների: Խորհրդայնաթուրքական այս դաշինքի հողի վրա տեղի ունեցան 1921-1923թթ. դեպքերը, երբ հայկական Արցախը տրվեց Ադրբեջանին ու չնայած հայկական կողմի ծավալած պայքարին՝ այդուհանդերձ հարցը լուծվեց հոգուտ Ադրբեջանի: Այսպիսով՝ հայկական հողերի, հատկապես Արցախի նկատմամբ, զավթողական քաղաքականությունն արդյունք էր պանթուրքիզմի, որն էլ այսօր հանդիսանում է թուրք-ադրբեջանական պատմագիտության հիմնական առանցքը:

Արցախյան հիմնախնդրի էությունն ամբողջական պատկերացնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրության հարթակի վրա դնել 1921-1923թթ. մի քանի փաստաթղթեր: Ադրբեջանի պանթուրքիստական քաղաքականության գլխավոր թիրախը՝ Արցախը, 1921թ. հունիսի 5-ի ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի անօրինական որոշմամբ բռնակցվեց Ադրբեջանին: Անտեսվեց և հաշվի չառնվեց ազգային ու պատմատարածքային գործոնը և առաջ մղվեց մտացածին «տնտեսական» գործոնը: 1921թ. հունիսին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը բացեհիբաց պնդում էր, որ Լեռնային Ղարաբաղը պետք է մտցվի Ադրբեջանի կազմ: Հունիսի 27-ին տեղի ունեցած Ադրբեջանի կոմկուսակցության կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստը որոշեց Լեռնային Ղարաբաղը չհանձնել Խորհրդային Հայաստանին՝ իբրև հիմնավորում առաջ քաշելով տնտեսական գործոնը: Այդ որոշման մեջ ասված էր. «Ամբողջությամբ վերցված Լեռնային Ղարաբաղի հարցը ընկ. Բեկզադյանի (Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի նախարար) առաջադրված ձևով Քաղ. և Կազմբյուրոն անընդունելի են համարում, նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի անվերապահ տնտեսական հակվածությունը դեպի Ադրբեջան և հարցը պետք է լուծվի հենց այդ իմաստով» [5]: Ն. Նարիմանովը սպառնում էր, որ, հակառակ դեպքում, ինքը հրաժարական կտա, որը կհանգեցի անկանխատեսելի մեծ բարդությունների: Գ. Հասանլին, իր աշխատության մեջ կեղծելով պատմական փաստերը, այդուհանդերձ, խոստովանում է, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցվեց վերջինիս նկատմամբ տնտեսական հակ-

վաճություն ունենալու պատճառաբանությամբ և անտեսվեց «պատմաէթնիկական» գործունը [6]։ փաստ, որը փաստորեն ընդունում է և ազգերի պատմագիտությունը։ Եվ այսպես 1921թ. հուլիսի 5-ի որոշման մեջ ասված էր.

ա. Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղություն հաստատելու անհրաժեշտությունից և վերին ու ստորին Ղարաբաղի տնտեսական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ-ի սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն ունենալով Շուշի քաղաքը, որը մտնում է ինքնավար մարզի կազմի մեջ։

բ. Հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը։

գ. Հանձնարարել Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նախագահությունը՝ բանակցել Հայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի պաշտոնի թեկնածության շուրջը։

դ. Լեռնային Ղարաբաղի ինքնավարության շրջանակները պետք է որոշի Ադրբեջանի Կենտկոմը և ներկայացնի Կենտկոմի Կովկասյան բյուրոյի հաստատմանը [7]։

Այսպիսով՝ ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշմամբ խախտվեց միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ոտնահարվեցին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը (94.4%) կազմող հայության իրավունքները, անտեսվեցին Խորհրդային Հայաստանի շահերը։ Արտահայտելով հայ ժողովրդի կամքը և քննադատելով ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի անօրինական որոշումը՝ արդեն հուլիսի 16-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմը միանգամայն սխալ և անօրինական որակեց այն [8]։ Միաժամանակ նշենք նաև այն, որ, ի տարբերություն Ն. Նարիմանովի, Հայաստանի ներկայացուցիչ Ալ.Մյասնիկյանը այս հարցում չցուցաբերեց վճռականություն և սկզբունքայնություն և չպնդեց՝ «ղարաբաղյան հարցը» ՌԿ(Բ)Կ կենտկոմի քննարկմանը ներկայացնելու պահանջը։

1921թ. հուլիսի 5-որոշումը չի կարող ծառայել որպես իրավական հիմք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և սահմանները որոշելու համար։ Այն ընդունվել է երրորդ պետության՝ Ռուսաստանի բոլշևիկյան կուսակցության կողմից, որն օրինական իրավունքներ, կամ իրավագործություն չի ունեցել։ Որոշումը կայացնելու պահին և՛ Հայաստանը, և՛ Ադրբեջանը թեպետ խորհրդային, բայց անկախ պետություններ էին։ Որոշումը բխում է ոչ թե իրավական, կամ պատմական պատճառաբանությունից, այլ մեկ անհատի՝ Նարիմանովի կամքի թելադրանքից։ Սակայն հատկանշական է, որ ադրբեջանցի պատմաբաններ Տ. Մուսաևը և Ի. Մամադովը «հայ-ադրբեջանական կոնֆլիկտ» վերտառությամբ աշխատության մեջ, ոտնահարելով ազատ ինքնորոշվելու ազգերի հիմնարար իրավունքներից մեկը, գտնում են, որ հենց կովբյուրոն պետք է որոշեր պատմական տարածքի հարցը և որևէ հանրաքվե անցկացնելու ու ժողովրդի կամքը հաշվի առնելու անհրաժեշտություն վերջիններս չէին տեսնում [9]։

1921թ. հուլիսի 5-ի Լեռնային Ղարաբաղի՝ Ադրբեջանին բռնակցման որոշումը միանգամայն արդարացի և օրինական գնահատելով՝ ադրբեջանցի կեղծարար պատմաբանը համեմատական է անցկացնում 1921թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի հետ, որի համաձայն՝ Նախիջևանը տրվեց Ադրբեջանին և մեջբերում Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանի հայտարարությունն այն մասին, որ վերջինս մեղադրել է խորհրդային Ռուսաստանին հայերի իրավունքները պաշտպանելու անկարողության մեջ, միաժամանակ նշում է, թե թուրքական պատվիրակությունը կոնֆերանսում հանդես է եկել որպես Կովկասի մուսուլմանների

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

հովանավոր և պաշտպանել խորհրդային Ադրբեջանի շահերը: Հեղինակի հատկապես հետևյալ միտքն է կարևոր, որտեղ նա բառացիորեն նշել է, թե հայերին զայրացրել է այն, որ Թուրքիային հաջողվեց Նախիջևանը պահել Ադրբեջանի կազմում և որպես փոխհատուցում այժմ Լեռնային Ղարաբաղն են պահանջում: Ինչպես նկատում ենք, բացարձակ անսքող ադրբեջանական պատմագիտությունը ներկայացնում է ավագ եղբոր՝ Թուրքիայի հովանավորությունը և պանթուրքիզմի՝ երկու պետություններին միավորող գաղափարախոսությունը: Ադրբեջանցի մեկ այլ հեղինակ՝ Ի. Նիֆտալիևը, ցնիկկաբար գրում է, թե Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի կազմի մեջ ընդգրկելու մասին որոշումը հիմնված էր ժողովրդավարական սկզբունքների վրա, քանի որ պատմականորեն այն Ադրբեջանի մասն էր, այստեղ տեղին է նշել և հիշեցնել, որ ժողովրդավարության հետ բացարձակ կապ չունի տնտեսական թյուր, գոյություն չունեցող հիմնավորման հիմքի վրա տարածքի բռնակցման և նրա պատմական ճակատագրի որոշումը: Բացի դրանից՝ Ղարաբաղը երբեք Ադրբեջանի մաս չի կազմել, այլ մաս է կազմել Ելիզավետպոլի նահանգի, սակայն եթե Խորհրդային Ադրբեջանը նույն ձևակերպմամբ հավակնում էր Ելիզավետպոլի նահանգի իրավահաջորդ լինելուն, ապա պետք է ընդուներ դրանից բխող բոլոր հետևանքները, նաև այն, որ ժամանակին Նախիջևանի ինքնավար հանրապետությունը եղել է Երևանի նահանգի կազմում:

Այնուհետև շուրջ երկու տարի պահանջվեց, որպեսզի Ադրբեջանը վերջապես իրագործեր Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու պահանջը: Չէինք սխալվի, եթե նշենք, որ արցախահայությանը սկստեղի վրա չտրվեց ինքնավարություն, այլ այն ձեռք բերվեց երկարատև պայքարի արդյունքում: Ադրբեջանցի որոշ պատմաբաններ գրում են, թե իբր հուլիսի 5-ի որոշումից հետո հայությունը շատ հանգիստ է եղել և նույնիսկ դեմ է եղել ինքնավարությանը: Ի հակասություն նման կեղծարարությունների՝ Հասանլին գրում է, որ հուլիսի 5-ից հետո էլ հայերը շարունակեցին իրենց ապակառուցողական քաղաքականությունը Ադրբեջանի դեմ [10]: Նշելով, որ ադրբեջանաձեռն դիրքորոշում ունեցող քաղաքական գործիչներ Լ.Միրզոյանն ու Կարակը Լեռնային Ղարաբաղ աշխատանքային այցից հետո նշել են, որ ղարաբաղյան հարցը շարունակում է կրկին թեժանալ կուսակցական և ազգայնամոլական տրամադրված մտավորականության կողմից: Սա խոստովանություն էր հենց կեղծարարների կողմից և իրենց իսկ պնդումների հակասականություն:

Այսպես՝ 1922թ. հոկտեմբերի 27-ին Կիրովի և Օրջոնոկիձեի նախաձեռնությամբ անցկացվեց Անդրերկրկոմի նիստ, որտեղ որոշվեց կոնսոլիդացնել հուլիսի 5-ի որոշումն իրականացնելու ուղղությամբ: Համապատասխան որոշմամբ Ա. Կարակոզովը նշանակվեց Լեռնային Ղարաբաղի գործադիր մարմնի ղեկավար: Ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է զբաղվեր ինքնավարության հարցերով:

Ադրբեջանի իշխանությունները Լեռնային Ղարաբաղի լիազոր նշանակեցին Ալիհեյդար Կարակին: Շուտով որպես երկրորդ լիազոր՝ Ղարաբաղ ուղարկվեց ադրբեջանաձեռն դիրքորոշում ունեցող, Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիությունների հանրապետական խորհրդի նախագահի տեղակալ Լևոն Միրզոյանը: Ադրբեջանի գործիչները սպառնում էին ուժի գործադրմամբ, եթե արցախահայությունը չկատարեր Ադրբեջանի պահանջները: Նրանք Արցախի շրջաններում իրավիճակի խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ և փորձեցին կորզել Ադրբեջանի շահերից բխող որոշումներ: 1921թ. օգոստոսի 1-ին Հաղորտի գյուղում տեղի ունեցավ Վարանդայի խորհուրդների արտահերթ համագումարը, որտեղ, չնայած Լևոն Միրզոյանի ջանքերին, ադրբեջանաձեռնարկող որոշում չկայացվեց:

1921թ. օգոստոսի 8-ին Լևոն Միրզոյանը, վերադառնալով Բաքու, Ադրբեջանի դեկավարությանը առաջարկեց Լեռնային Ղարաբաղին տալ ինքնավարություն: Ինքնավարության այս առաջարկը ուներ մեկ նպատակ՝ կոտրել Լեռնային Ղարաբաղի հայության ազգային-ազատագրական շարժման թափը: 1921թ. ինքնավարության պայմանները կատարելու նպատակով, Ադրկոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն 1921թ. հուլիսի 20-ին ստեղծում են մի հանձնաժողով, որը պետք է մշակեր Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունը:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի դեկավարությունը ոչ միայն դեմ էր ինքնավարությանը, այլև ամեն կերպ պայքարում էր դրա դեմ: 1921թ. սեպտեմբերի 26-ին Ադրկոմկուսի Քաղբյուրոն և Կազմբյուրոն որոշում են. «խնդրել Կովբյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, այսուհետ ինքնավարություն չհայտարարել» [11]:

Ստեղծվում է հատուկ հանձնաժողով (Կարակ, Էֆենդիև, Ստուկալով և Միրզոյան) և շտապ ուղարկվում Ղարաբաղ՝ «նյութեր հավաքելու համար»: Հանձնաժողովի ջանքերով 1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանս, որի մասնակիցների ճնշող մեծամասնությունը մոտույմաններ էին: «Ղարաբաղի դրության մասին» հարցի շուրջը հանդես եկավ Կարակը: Կոնֆերանսի որոշման մեջ ասված էր. «Ղարաբաղի աշխատավորների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ բանաձևում, հենց հանդիսանում են դարաբաղյան հարցի լուծում»: Պահանջ է դրվում, որ «ազգայնական հողի և ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դուրս շարտվեն ու փոխադրվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով»: Կոնֆերանսի նման դիրքորոշումը հնարավորություն է ստեղծում աշխատանքից հեռացնելու հայրենասեր անձանց և նրանց փոխարինելու ադրբեջանցիներով, կամ ադրբեջանամետ դիրքորոշմամբ հայ աշխատակիցներով:

Ադրբեջանցի պատմագիր Հասանլըն նշում է, թե իբր, չնայած այն հանգամանքին, որ աշխատավորների կոնֆերանսը դեմ է արտահայտվել ինքնավարությանը, այդուհանդերձ, Ադրբեջանի իշխանությունները քայլեր են ձեռնարկել «արցախահայությանը ինքնավարություն շնորհելու համար»: Հեղինակը, կեղծաբանելով պատմական փաստերը, գրում է. «...Որոշվեց ուժեղացնել պայքարը բանդիտիզմի դեմ Լեռնային Ղարաբաղում...»: Բանդիտիզմ որակավորումն տրվում էր արցախահայությանը, նրանց, ովքեր դեմ էին, անընդունելի էին համարում Ադրբեջանի իշխանությունը: Փաստորեն վերջինս ազգայնականներ ու բանդիտներ էր որակում հայրենասեր տարրերին: Հիմնականում արտահայտելով ադրբեջանամետ տարրերի կամքը, հեռացնելով ու հալածելով վճռորոշ կեցվածք ընդունած և Հայաստանի հետ միավորելու պահանջով հանդես եկող անձանց, որոնց ազգայնականներ էին կոչում՝ Ադրբեջանի իշխանությունները հայտարարում էին, որ «ղարաբաղյան հարց» որպես այդպիսին գոյություն չունի և իբր թե արցախահայերը նույնպես դեմ էին ինքնավարությանը: Կարակը որոշում է ընդունում պայքարել բանդիտիզմի դեմ: Այժմ անդրադառնանք Նիֆտալիևին, որը, ներկայացնելով Շուշիում տեղի ունեցած աշխատավորների երկրորդ կոնֆերանսը, գրում է, թե կարծես բոլորը նախորդք մշակված սցենարով դեմ հանդես եկան Ղարաբաղը Ադրբեջանին միավորելու որոշման դեմ [12]: Ուշադրություն դարձնենք պատմաբանի խոստովանությանը: Որոշմանը դեմ լինելու գլխավոր փաստարկներ ելույթ ունեցողները բերում էին այն, որ հայերն ավելի բարձր կուլտուրական մակարդակի վրա են, քան ադրբեջանցիները, որոնք նույնիսկ ինքնակառավարվել չեն կարող, նյուս կողմից՝ ադրբեջանցի կոմունիստ-

ները որակվում էին որպես ազգայնամուլներ: Ըստ էության, բանդիտիզմ որակվեց բռնակցման դեմ հանդես եկող հայոց մտավոր ներուժը: Իրականում ինքնավարությանը դեմ էր Ադրբեջանը, որն ամեն կերպ փորձում էր խոչընդոտել ինքնավարություն ստանալու արցախահայության արդարացի պայքարը: Արցախահայության իրական ծայրն ու կամքն այն աստիճան է ոտնահարվել, որ Ն. Նարինանովը լկտիաբար հայտարարել է, թե ոչ մեկ աշխարհում ի գորու չէ խանգարել իրենց և թույլ չտալ ազդել Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա՝ արտահայտելու իրենց կամքը Ադրբեջանի հետ միավորման կամքի օգտին [13]: Ուշադրություն դարձնենք հետևյալ հանգամանքին. Բառացիորեն առանց քողարկելու՝ ադրբեջանցի պատմաբանը գրում է, ՌԿԿ Կոմբյուրոյի 1921թ. հուլիսի 27-ի նիստում, մի կողմ դնելով պատմաազգագրական գործոնները, որոշման հիմքում դրվեց միայն Ադրբեջանից Ղարաբաղի տնտեսական կախվածությունը: 1922թ. փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարում Ադրբեջանի ներկայացուցիչ Կուլիևը, անդրադարձնալով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցերին, նշել է. «Ադրբեջանական կենտրոնն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր, Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն: Միայն այդ եղանակով, ըստ Կուլիևի, կհաստատվեր իսկական խաղաղություն և Ղարաբաղում և Անդրկովկասում» [14]: Ավելի ուշ, երբ Արցախում հաստատվեց ինքնավարություն, Նարինանովը նշել է, թե ինքը դեմ էր ինքնավարության գաղափարին՝ հասկանալով, որ արցախահայությանը տրված ինքնավարությունը «դանդաղ գործունեության մեջ դրված թունք» [15] էր, որը մի օր պետք էր պայթեր... Ադրբեջանցիները լավ էին հասկանում, որ բռնի ուժով, ապօրինի ճանապարհով իրենց բռնակցված Լեռնային Ղարաբաղում հայությունը երբեք չի հաշտվելու Ադրբեջանին միավորվելու հետ, իսկ եթե արցախահայությունը ստանար ինքնավարություն, ապա նման պայմաններում առավել արագ տեղի կունենար վերջիններիս ձգտումը մայր Հայաստանի հետ վերամիավորվելու: Արցախահայության շարունակական պայքարը ստիպեց, որ Լևոն Միրզոյանը 1921թ. օգոստոսի 8-ին Շուշիից Ադրկոմկուսի կենտրոնին և Անդրկերկրկոմին դիմի հետևյալ առաջարկով. «Ամբողջ Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր՝ ենթակա կենտրոնին և Ադրժողկոմխորհին ու Կենտգործկոմին, իսկ կուսակցության գծով Ադր ԿԿ-ին:

Եվ այսպես՝ շուրջ 2 տարվա պայքարից հետո Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը 1923թ. հուլիսի 7-ին ստիպված էր ընդունելու 1921թ. հուլիսի 5-ի Կոմբյուրոյի որոշման կետերի մեծամասնությանը հակասող «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի» կազմավորման մասին դեկրետը: Այս դեկրետի ընդունման քաղաքական հիմնավորումը, ինչպես նշված էր փաստաթղթում, բխում էր «հայ-մուսուլմանական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունից միասնական պետության մեջ»: Հարկ է ընդգծել, որ 1921թ. հուլիսի 5-ի Կոմբյուրոյի ապօրինի որոշումը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին թողնելու մասին, մի քայլ առաջ էր ԼՂԻՄ կազմավորման մասին 1923թ. ընդունված փաստաթղթից: ԼՂԻՄ-ի կազմավորման մասին որոշումը, չնայած հռչակված ինքնավարությանը, այդուհանդերձ իրենով հակասում էր 1921թ. որոշման կետերին՝ ոչ ի շահ հայերի:

Խախտելով ՌԿԿ Կոմբյուրոյի որոշումը՝ Ադրբեջանի Կենտգործկոմը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից»: Մինչդեռ 1921թ. որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշիի քաղաքով» [16]: Այսինքն՝ լայն ինքնավարությունը պետք է տրվեր ոչ թե նրա մի մասին, այլ

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

որը Լեռնային Ղարաբաղին: Արդյունքում՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ 12 հազար քառակուսի կմ տարածքից ստեղծվեց 4.4 հազար քկմ տարածք ընդգրկող ԼՂԻՄ-ը: Երկրորդ կետով նշված էր, որ բոլոր արոտավայրերի, անտառների, այգիների, հողի և ջրի փաստական տնօրինումը ներկայիս տերերի գործն է: Մարզի կենտրոն հաստատվեց Խանքենդին (Ստեփանակերտը), դա այն դեպքում, երբ 1921թ. որոշմամբ կենտրոն պետք է լիներ Շուշին: Ադրբեջանի իշխանությունները դեմ էին, որ ԼՂԻՄ կենտրոնը դառնար հայոց հինավուրց մշակութային քաղաք Շուշին՝ հասկանալով, որ այն կդառնար հայության համայնքման կենտրոն: Հատկանշական է այն, որ հենց ադրբեջանցի պատմաբան Հասանլին է տեսնում հուլիսի 5-ի և հուլիսի 7-ի որոշումների հակասականությունը: Անդրադառնալով տարբերություններից մեկին՝ ըստ որի՝ Շուշին պետք է դառնար Լեռնային Ղարաբաղի կենտրոն՝ ըստ հուլիսի 5-ի որոշման, իսկ հուլիսի 7-ին որոշվեց, որ նման կենտրոն պետք է դառնար Ստեփանակերտը, հեղինակը, կրկին աղավաղելով պատմական փաստերը, պատճառը վերջինս տեսնում էր նրանում, որ 1923թ. հուլիսի 7-ին դեռևս ԼՂԻՄ կազմավորման կենտրոնական գործադիր կոմիտեն Շուշին ԼՂԻՄ-ի կազմի մեջ չէր նախատեսում, բացի դրանից գրում էր, թե իբր հայերն իրենք չէին ուզում, որ Շուշին լիներ ինքնավար մարզի կենտրոն՝ վախենալով այն հանգամանքից, որ բնակչության մեծամասնությունը կազմող ադրբեջանցիները կարող էին իրենց ձեռքը վերցնել մարզի ղեկավար պաշտոնները: Այնինչ նշենք, որ Ադրբեջանի ղեկավարությունը կոնկրետ քայլեր էր ձեռնարկում ամեն կերպ խոչընդոտելու Շուշիի՝ որպես վարչական կենտրոնի հռչակումը և ընդհանրապես Շուշին ԼՂԻՄ-ի կազմից դուրս բերելու և այն Քուրդիաստանի գավառի մեջ ընդգրկելու նպատակով: Այսպես՝ 1923թ. օգոստոսի 9-ին Ադրբեջանի կենտրոնական կոմիտեն հղվեց դիմում իբր Շուշիի բնակչության կողմից՝ ստորագրված Ռ. Ալիևի, Ի. Մուսաևի, Բ. Սարաբիի և Գ. Շամշիևի կողմից, որտեղ պահանջում էին Շուշին միացնել Քուրդիաստանի ուեզդի հետ՝ դարձյալ առաջ քաշելով տնտեսական գործունը: Փաստորեն ինքնավարություն հռչակելով՝ Ադրբեջանը ձգտում էր այդ ինքնավարությունը հնարավորինս բզկտելու, բարձրադիր, հայոց մշակութային և մտավոր ներուժի կենտրոն Շուշին ևս կտրելու ԼՂԻՄ-ից և որպես անջրպետ արցախահայության համար, այն միացնել Քուրդիաստանին: Ադրբեջանի իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի Շուշին չընդգրկվեր ԼՂԻՄ-կազմում: 1924թ. հունվարի 4-ին Շուշիի լիազոր ներկայացուցիչներ Միրագիրովի և Գուլիևի կողմից կրկին դիմում հղվեց Անդրկովկասի խորհուրդների համագումար, Շուշին ԼՂԻՄ-ի կազմից հանելու նպատակով: Եվ միայն արցախահայության համառ ջանքերի շնորհիվ Շուշին մնաց ինքնավար մարզի կազմում, սակայն այն կենտրոնի չվերաժվեց: Ադրբեջանի ղեկավարությունը փորձեր կատարեց նույնիսկ պատմական Վարարակնին փոխարինելու եկած Ստեփանակերտ անվան մեջ կատարել ադրբեջանահունչ խմբագրում՝ պնդելով, որ քաղաքը կոչվեր ոչ թե Ստեփանակերտ, այլ Ստեփանքենդ: Նույնիսկ մի որոշ ժամանակ պաշտոնական փաստաթղթերում անվանումն հենց այդպես էր հորջորջվում: Ի վերջո սակայն հաղթանակեց հայահունչ Ստեփանակերտը:

Այսպիսով՝ Ադր. ԽՍՀ ղեկավարությունը որդեգրեց ԼՂԻՄ-ի որպես ազգային հայկական պետական կազմավորման ինքնուրույնությունը սահմանափակելու և նրա ազգային էությունը խեղաթյուրելու քաղաքականություն: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի անվանման մեջ չի ընդգծվել նաև նրա ազգային պատկանելությունը: Հատկանշական է, որ ԼՂԻՄ-հռչակման հենց նույն օրը Ադրբեջանի իշխանությունները հայտնեցին գաղափար հռչակել քրդական ինքնավարություն, հենց ԼՂԻՄ- սահմանագծին: Այս մասին խոստովանություն կա ադրբեջանցի պատմաբանի մոտ: Հենց նույն օրն իսկ որոշվեց բզկտել ընդունված որոշումը: Հայկական այդ ինքնավար մարզի սահմանները որոշելիս

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կանխամտածված ձևով, մարզի կազմի մեջ չեն մտցրել Արցախ-Ղարաբաղի լեռնային մասի զգալի հատվածը, դուրս է թողնվել Գյուլիստանի մելիքության ամբողջ տարածքը՝ այժմյան Շահումյանի շրջանն ու Խանլարի շրջանի, ինչպես նաև Դիզակի մելիքության զգալի հատվածը: Ղարաբաղից անջատեցին նրա հարթավայրային շրջանը և Աղդամ ավանը դարձրին առանձին շրջանի կենտրոն: ԼՂԻՄ-ի տարածքը արհեստականորեն, նեղ շերտով, ընդամենը 6 կմ լայնությամբ, կտրվում է Հայաստանի հետ ընդհանուր սահման ունենալու հնարավորությունից: Այսպիսով՝ ԼՂԻՄ-ը, որն ընդգրկում էր Արցախի տարածքի մի հատվածը, չորս կողմից շրջափակվում է Ադրբեջանի կողմից ստեղծված և ադրբեջանցիներով բնակեցված վարչական շրջաններով և մեկուսացվում Հայաստանից:

Փոփոխություն տեղի ունեցավ նաև մարզի ինքնավանական մեջ: Սկզբում մարզը կոչվում էր АОНК (ինքնավար մարզ Լեռնային Ղարաբաղի), և փաստորեն անվանումն իսկ հուշում էր, որ ինքնավարությունը տրվել էր Լեռնային Ղարաբաղի մի մասին: 1936թ. մարզը վերանվանվեց НКАО (ԼՂԻՄ, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ) դրանով Ադրբեջանը փորձում էր Ղարաբաղի սահմանները նեղացնել հենց ինքնավարության շրջանակներում, մինչդեռ Լեռնային Ղարաբաղը դա միայն այն չէր, ինչ ինքնավար մարզն էր, մարզը Արցախի մի մասն էր կազմում միայն: Այսպիսով, դեմ լինելով ինքնավարությանը՝ Ադրբեջանական իշխանությունները փորձում էին ամեն կերպ սահմանափակել այն, իսկ նրանց տարիներին քաղաքականությունը միտված էր մարզի հայաթափման աստիճանական նպատակին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы 20ого века), М., 2010, стр. 78
2. Гасанли Д. История дипломатии Азербайджанской республики. Том.2. М., 2013, стр. 263.
3. Там же.
4. Гасанли Д. указ. работа, стр. 264
5. Աբրահամյան Հ., Արցախի հիմնախնդիրը խորհրդային տարիներին (1920-1988թթ.), Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Լրատու, Ստեփ., 2011(2), էջ 5:
6. Гасанли Д. указ. работа, стр 249.
7. Խաչատրյան Վ., Աբրահամյան Հ., Հայության պայքարը ԼՂԻՄ-ը խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Եր., 2011, էջ 190:
8. Там же, стр. 8
9. Мамаддов И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт, Б., 2008, стр. 54.
10. Гасанли Д. указ. работа, стр 239.
11. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2011, էջ 236:
12. Гасанли Д. указ. работа, стр 273
13. Там же, стр. 227:
14. Բալայան Վ., указ. работа, стр. 235
15. Гасанли Д. указ. работа, стр. 250
16. Փաշայան Հ., Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման և ԱդրԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում (1923-1988), 21-րդ դար գիտական հանդես, թիվ 4, 2014, էջ 29:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԼՂԻՄ կազմավորման հարցի շուրջ (ադրբեջանական պատմագիտության
կեղծարարությունները)
Արմինե Արստամյան

Սույն հոդվածում ներկայացված է ԼՂԻՄ-ի ստեղծման մասին պատմական որոշումը և մարզի կազմավորման գործընթացը: Ցույց է տրվում, որ Ադրբեջանը դեմ էր ինքնավարության շնորհմանը և միայն 2 տարվա անընդմեջ պայքարից հետո հնարավոր եղավ ստանալ ինքնավարություն: Եվ հենց ինքնավարությանը դեմ լինելու հանգամանքն էր պատճառը, որ Ադրբեջանական իշխանությունները վերածեցին 1921թ. հուլիսի 5-ի որոշման կետերը՝ ի շահ իրենց: Ինքնավար մարզը ձևավորվեց ընդամենը 4,4 հազար քվմ տարածքի վրա, նրանից կտրվեցին պատմական հայկական հողերը, իսկ մայր Հայաստանի հետ անմիջական կապի բացառման նպատակով մարզը շրջապատվեց ադրբեջանական իշխանությունների կողմից ստեղծված և ադրբեջանցիներով բնակեցված վարչական միավորներով:

РЕЗЮМЕ
О вопросе формирования НКАО
(фальсификации азербайджанской историографии)
Армине Арустамян

***Ключевые слова:** автономия, историческое решение, НКАО, армяне Арцаха, политика, армянская часть, этническая чистка, фальсификация.*

В данной статье представлено историческое решение о создании НКАО и процесс образования области. Отмечается тот факт, что Азербайджан был против автономии. Лишь после двухлетней непрерывной борьбы для карабахских армян стало возможным получение автономии. Так как Азербайджан был против предоставления автономии, азербайджанские власти перedelывали решения от 5-ого июля 1921 года. Автономная область была создана всего на площади 4.4 тысячи км². От нее отделили исконно армянские земли, а для лишения прямой связи с Арменией, вокруг области были созданы административные единицы, населенные азербайджанцами.

SUMMARY
On the formation of NKAR
(the falsifications of Azeri historiography)
Armine Arustamyan

***Keywords:** autonomy, historical decree, NKAR, Artsakh Armenians, policy, Armenian portion, ethnic cleansing, falsification*

The article presents the history of the NKAR establishment decree and the region formation process. The study proves that Azerbaijan was against granting the region the rank of an autonomous oblast which was gained after a two year struggle. As Azerbaijan was against granting autonomy, the Azeri authorities reshaped the decree under date July 5, 1921 in its favor. The autonomous region was formed on the territory of 4,4 thousand km². It was stripped from the historical Armenian territories and to prevent any connection with Armenia administrative districts populated by Azeris were formed.